

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄ N 8/10

25-ը հունիսի 2014 թվականի

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ <<ՔՎԱՆՏԱՅԻՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ ԵՎ
ՆՈՐ ՆՅՈՒԹԵՐ>> ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի կանոնադրության 30-րդ կետի 3-րդ ենթակետով՝ Երևանի պետական համալսարանի գիտական խորհուրդը որոշում է.

1. Հաստատել Երևանի պետական համալսարանի <<Քվանտային տեխնոլոգիաներ և նոր նյութեր>> գիտակրթական կենտրոնի կանոնադրությունը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԵՊՀ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝

Ա. Հ. ՄԻՄՈՆՅԱՆ

Հաստատված է
ԵՊՀ Գիտական Խորհրդի
2014թ. հունիսի 25-ի թիվ 8 նիստում

ԵՊՀ Գիտական Խորհրդի նախագահ,
Ա.Հ. Սիմոնյան

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՔՎԱՆՏԱՅԻՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ ԵՎ ՆՈՐ ՆՅՈՒԹԵՐ ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1 Երևանի պետական համալսարանի Քվանտային տեխնոլոգիաներ և նոր նյութեր գիտակրթական կենտրոնը (այսուհետ՝ Կենտրոն) Երևանի պետական համալսարանի (այսուհետ՝ ԵՊՀ) կառուցվածքային ստորաբաժանում է:

Կենտրոնը հիմնադրվել է Երևանի պետական համալսարանի, Հայաստանի Հանրապետության Գիտությունների Ազգային Ակադեմիայի (այսուհետ՝ ԳԱԱ) և Հայ-Ռուսական (Սլավոնական) Համալսարանի (այսուհետ՝ ՀՌՀ) հետ համատեղ ստորագրված համագործակցության հուշագրի հիման վրա:

1.2 Կենտրոնը գործում է ՀՀ օրենսդրությանը համապատասխան՝ ԵՊՀ կանոնադրության ու սույն կանոնադրության հիման վրա:

1.3 Կենտրոնի անվանումն է՝

Հայերեն՝ ԵՊՀ Քվանտային տեխնոլոգիաներ և նոր նյութեր գիտակրթական կենտրոն
Ռուսերեն՝ Научно-образовательный центр квантовых технологий и новых материалов
EGY

Անգլերեն լրիվ՝ YSU Scientific-Educational Centre of Quantum Technologies and New Materials

1.4. Կենտրոնը սահմանված կարգով կարող է ունենալ նաև իր անվանմամբ որոշմակնիք (հայերեն, ռուսերեն, անգլերեն լեզուներով) և պաշտոնաթուղթ (բլանկ):

1.5. Կենտրոնի գտնվելու հասցեն է՝ 0025, ք. Երևան, Ալեք Մանուկյան 1:

1.4 Սույն կանոնադրության մեջ փոփոխություններն ու լրացումներն, ինչպես նաև Կենտրոնի վերակազմակերպումը կամ լուծարումն իրականացվում են ԵՊՀ ռեկտորի ներկայացմամբ՝ ԵՊՀ Գիտական Խորհրդի որոշմամբ:

2. ԿԵՆՏՐՈՆԻ ԽՆԴԻՐՆԵՐՆ ՈՒ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

2.1 Կենտրոնի խնդիրներն են.

2.1.1. Հանրապետական գիտակրթական համակարգի ձևավորում՝ նպատակաուղղված քվանտային տեխնոլոգիաների և նոր նյութերի ոլորտներում հիմնարար և կիրառական հետազոտությունների զարգացմանը՝ կիրառելով նաև բարձր արտադրողականությամբ հաշվարկներ՝ ԵՊՀ-ում գործող «Գրիդ» համակարգչային կլաստերի և ենթակառուցվածքի հիման վրա:

2.1.2. ԵՊՀ-ի, ԳԱԱ համակարգի ինստիտուտների (Ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտ, Ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտ, Ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտ) և ՀՌՀ միջև քվանտային տեխնոլոգիաների և նոր նյութերի ոլորտներում համատեղ գիտական գործունեության կազմակերպումը, ինչպես նաև տարբեր դրամաշնորհների և նախագծերի հայցման ուղղությամբ շարունակական գործունեության ծավալումը:

2.1.3. Բարդ, բաղադրյալ ֆիզիկական համակարգերի գիտական մոդելավորման, ինչպես նաև բարձր արտադրողականությամբ հաշվարկների ոլորտներում ԵՊՀ, ԳԱԱ և ՀՌՀ մասնագետների պատրաստումը (լրացուցիչ կրթության ծրագրերի իրականացում):

2.2 Կենտրոնի գործառնություններն են.

2.2.1. Կազմակերպել և իրականացնել քվանտային տեխնոլոգիաների և նոր նյութերի ոլորտներին վերաբերող տեսական և փորձարարական բնույթի հետազոտություններ, պատրաստել ու հրատարակել գիտական և ուսումնառական նյութեր:

2.2.2. Համագործակցություն հաստատել ՀՀ-ում և դրա սահմաններից դուրս գործող շահագրգիռ կազմակերպությունների, պետական մարմինների և ֆիզիկական անձանց հետ, իրականացնել համատեղ ծրագրեր:

2.2.3. Իրականացնել համակարգչային ծրագրերի փաթեթների ստեղծումը ԵՊՀ, ԳԱԱ ինստիտուտների և ՀՌՀ գիտական թեմաների համար և կազմակերպել գիտական հետազոտություններ համակարգչային «Գրիդ» կլաստերի և «Քլոուդ» ենթակառուցվածքների օգտագործմամբ:

2.2.4. Կազմակերպել գիտաժողովներ, կլոր սեղաններ, պարբերական գիտական սեմինարներ կենտրոնի գիտական ուղղվածությունների գծով՝ ԵՊՀ, ՀՌՀ և ԳԱԱ ուսանողների, ինչպես նաև երիտասարդ աշխատակիցների ներգրավմամբ:

2.2.5. Սահմանված կարգով իրականացնել ստացված գիտական արդյունքների և համակարգչային ծրագրերի առևտրայնացումը:

2.2.6. Կենտրոնը նաև կարող է իրականացնել իր կանոնադրական նպատակներից բխող և ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ գործառնություններ:

3. ԿԵՆՏՐՈՆԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ ԵՎ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

3.1. Կենտրոնի կառավարումը հիմնված է միանձնյա և կոլեգիալ կառավարման սկզբունքների զուգակցման վրա: Կենտրոնի կառավարման մարմիններն են՝ Կենտրոնի խորհուրդը և Կենտրոնի տնօրենը:

3.2. Կենտրոնի խորհուրդը՝ Կենտրոնի կառավարման բարձրագույն մարմինն է, որը կազմված է բոլոր ներգրավված կազմակերպությունների՝ ԵՊՀ-ի, ԳԱԱ ինստիտուտների և ՀՌՀ-ի լիազորված ներկայացուցիչներից:

3.3. Կենտրոնի խորհրդի անդամներն են՝ ԵՊՀ գիտական քաղաքականության և միջազգային համագործակցության գծով պրոռեկտորը, կենտրոնի տնօրենը, ԵՊՀ ֆիզիկայի ֆակուլտետի դեկանը, ԳԱԱ ինստիտուտների ներկայացուցիչները (Ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտ, Ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտ, Ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտ), ՀՌՀ-ի պրոռեկտորը և ՀՌՀ Մաթեմատիկայի և բարձր տեխնոլոգիաների ինստիտուտի ներկայացուցիչը:

3.4. Խորհրդի լիազորությունների ժամկետը 5 տարի է: Խորհրդի լիազորությունների ավարտից մեկ ամիս առաջ Կենտրոնի տնօրենը ԵՊՀ ռեկտորի հաստատմանն է ներկայացնում Կենտրոնի խորհրդի անդամների կազմը: Մինչև խորհրդի լիազորությունների ավարտը փոփոխությունները դրա կազմում, ըստ անհրաժեշտության,

կատարվում են ԵՊՀ ռեկտորի կողմից՝ Կենտրոնի տնօրենի կամ Խորհրդի առաջարկությամբ:

3.5. Կենտրոնի խորհուրդը՝

1) կենտրոնի տնօրենի ներկայացմամբ քննարկում և հաստատում է Կենտրոնի գործունեության հիմնական ուղղություններն ու ռազմավարությունը,

2) քննարկում և հաստատում է Կենտրոնի գործունեության տարեկան ծրագրերը, քննարկում է գերակա ծրագրերի իրականացման ընթացքը, առաջարկություններ ներկայացնում անհրաժեշտ հաստիքների, համապատասխան կազմակերպությունների կողմից նյութական և ֆինանսական միջոցների հատկացման վերաբերյալ,

3) քննարկում և հաստատում է պետական (այդ թվում՝ նպատակային) կամ միջազգային ֆինանսավորմամբ տարբեր ծրագրերին Կենտրոնի կողմից ներկայացվող հայտերը,

4) լսում և հաստատում է Կենտրոնի գործունեության վերաբերյալ Կենտրոնի տնօրենի տարեկան հաշվետվությունը:

3.6. Կենտրոնի գործունեությունը կազմակերպում և ղեկավարում է Կենտրոնի տնօրենը, ով պատասխանատու է Կենտրոնի բնականոն գործունեության, Կենտրոնի առջև դրված խնդիրների ու գործառույթների պատշաճ իրականացման համար:

3.7. Կենտրոնի տնօրենը նշանակվում է ԵՊՀ ռեկտորի կողմից Կենտրոնի կառավարման խորհրդի առաջարկությամբ 5 տարի ժամկետով: ԵՊՀ ռեկտորը Կենտրոնի տնօրենի հետ կնքում է աշխատանքային պայմանագիր:

3.8. Կենտրոնի տնօրենին նրա բացակայության ժամանակ Կենտրոնի տնօրենի առաջարկության և ԵՊՀ ռեկտորի հրամանի համաձայն փոխարինում է Կենտրոնի աշխատակիցներից որևէ մեկը:

3.9 Կենտրոնի տնօրենը՝

1) ապահովում է Կենտրոնի խորհրդի որոշումների կատարումը,

2) ԵՊՀ ռեկտորի հաստատմանն է ներկայացնում Կենտրոնի հաստիքացուցակով նախատեսված պաշտոններում նշանակման ենթակա անձանց թեկնածությունները,

3) կազմակերպում և վերահսկում է Կենտրոնի գործունեությունը գիտահետազոտական, գիտաուսումնական, միջազգային և այլ ոլորտներում,

4) սահմանված կարգով տնօրինում է Կենտրոնին հատկացված ֆինանսական միջոցները,

5) լուծում է կենտրոնի կանոնադրությունից բխող և կենտրոնի գիտահետազոտական և գիտաուսումնական գործունեության հետ կապված այլ հարցեր,

6) ներկայացնում է կենտրոնը ներհամալսարանական և արտահամալսարանական հարաբերություններում, կենտրոնի անունից հանդես է գալիս պետական մարմիններում և այլ կազմակերպություններում:

7) ամենամյա հաշվետվություն է ներկայացնում ԵՊՀ գիտական խորհրդին:

8) կրում է նյութական պատասխանատվություն Կենտրոնին ամրագրված գույքի համար:

3.10 Կենտրոնի հաստիքացուցակը Կենտրոնի տնօրենի ներկայությամբ հաստատում է ԵՊՀ ռեկտորը: Կենտրոնի առջև դրված խնդիրների լուծման և գործառույթների իրականացման համար Կենտրոնը պայմանագրային հիմունքներով կարող է ներգրավել նաև հաստիքացուցակով չնախատեսված այլ համապատասխան մասնագետներ:

4. ԿԵՆՏՐՈՆԻ ԳՈՒՅՔԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

4.1. Կենտրոնի գույքի, այդ թվում՝ ֆինանսական միջոցների ձևավորման աղբյուրներն են՝

ա) Կենտրոնին ԵՊՀ-ի, ՀՌՀ-ի և ԳԱԱ ինստիտուտների կողմից օգտագործման իրավունքով հանձնված գույքը և հատկացված դրամական միջոցները,

բ) Կենտրոնի կողմից իրականացվող ծրագրերի շրջանակներում մասնակիցների կողմից վճարվող վարձավճարները,

գ) ՀՀ պետական բյուջեից պետական պատվերի շրջանակում կամ այլ նպատակով (եղանակով) հատկացված միջոցները,

դ) ՀՀ և օտարերկրյա պետությունների իրավաբանական և ֆիզիկական անձանց կատարած ներդրումները, այդ թվում՝ բարեգործական, հովանավորչական, նպատակային մոծումները, նվիրված և կտակված գույքը, դրամաշնորհները,

ե) Կենտրոնի գործունեության արդյունք համարվող մտավոր և ստեղծագործական արտադրանքի վաճառքից գոյացող միջոցները,

զ) այն միջոցները, որոնք գոյանում են Կենտրոնին թույլատրված գործունեության տեսակներից և ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներից: